АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ В XVIII ВЕКЕ

1760—1800 гг.

СБОРНИК ДОКУМЕНТОВ

ТОМ IV

Под редакцией акад. АН АрмССР М. Г. НЕРСИСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1990

Բարձր գերազանցագոյն Պաւլ Սարգէիչ, ողորմածագոյն բարերար տէր մեր։

Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ տէր Յովհաննէս կաթուղիկոս Աղուանից հայոց և սրբոյ Աթոռոյս Գանձասարու, յորմէ քրիստոսական սուրբ և միաբար ողջունիւ նոյնասահման և ճշմարիտ սիրով աստուածային և բազմառատ օրհնութեամբ գիտասցէ գերազանցագոյն վերոյ գրեալ տէր մեր բարերամ*։ Բարձր գերազանցութեան ձերոյ առաքեցեալ այրն Գաբրիէլ գրով սրբազնագունեղ արքեպիսկոպոսին Յովսեփայ էհաս առ մեզ, և զամենայն ի գրոց անտի գիտացաք։ Քանզի հրաման է ինքնակալութենէ պայծառափայլ տէրութենէ ձերմէ ելանել և ազատել զազգս մեր ի ձեռաց անօրինաց և զերկիրս մեր և զմեզ `ի ներքոյ ինքնակալ տէրութեան ձերոյ նուաջել*, որպէս երանելի և յաւիտենական փառացն ժառանգորդ մեծ կայսրն Պետրոս ունէր ի մտի և խորհրդի առ ի ազատել զմեզ, որպէս նախնիքն մեր հրամանաւ նորին մինչև ԺԸ (10) կամ այլ աւելի տարի ընդ անօրինաց պատերազմեցան թէ ընդ օսմանցուն և թէ ընդ զզլբաշուն, մինչոր անյոյս լիեալ նադր շահն եկն և նուաճեաց զմեզ։

Իսկ արդ՝ այժմ որովհետև լուաք այդ աւետալի և փրկարար լուրդ ցընծացաք ի հոգի և ի մարմինս մեր, և յամենայնի անձնէ և ի զօրութիւնէ մերմէ յօժար կամօք և սրտի մտօք ջանամք և զանձինս մեր զնեմք մինչև ցմահ ի վերայ այդր աւետալի լրոյ։

Զի մեք հնգեսին մէլիքքս* մեր հոգևոր հովուապետաւն կաթուղիկոսաւ, եպիսկոպոսօք և մարմնաւոր իշխանօք, եիւզբաշօք*, տանուտերամբք, զօրապետօք և զօրօք և հասարակ ժողովրդովք [կամք] մինչև ի (20.000) կամ ԼՌ (30.000) սպառազէն արամբք և զօրօք։ Նաև հրաման է ձերոյ բարերար տէրութենէ մինչև երկուտասան Ռ (12.000) զօրօք գալ յերկիրս մեր և կառաւարութիւն նոցին ի մնալ։ Գրէք, թէ կերակրոյ և հացի զօրացն և թէ անասնոց, ձիանց և այլոց կենցաղաւարութեանց ձիմերայնոց* և ամարայնոց առ այս լո՛ւր ծառայիցդ քոց, ո տէր մեր, զի ԼՌ (30000) արամբ պարտիս գալ, զի ճոխ և պայծառ երևիլ անօրէն ազգացն տաճկաց։

Եվ թէ վասն կերակրոյ զօրացն արքունի հոգաս, այս այն բարելի Ղարապաղն է, որ նատր շահն ԳԾՌ (300.000) արամբք ԲԴ (2—3) տարի մնաց, ոչինչ նեղութիւն չքաշեց զօրք նորին։ Այժմ բարերար ողորմութենէ ձերմէ կարողեմք ԼՌ (30.000) զօրքն արքունի մինչև Իվ (20—30) ամն կառաւարել աստ ապահով և անպակասքստ յամենայնի, զի թէպէտ տէրդ մեր ոչ ես տեղակ բարի բարուց երկրի մերոյ աստծով ուրախարար գալստեամբդ քոյ իմանալոց ես, զի մեր խորհուրդն և կամքն այս է, որ աստծով, երբ մօտենայք երկիրս մեր, պատրաստ եմք առ ի ծառայելոյ զօրօք մերովք ձեզ։ Պարտի տէրդ մեր ծառայիցդ քոց լսել աղաչանացն, յամենայն կողմանէ միամիտ լինիլ թէ կերակրի կողմանէ, թէ հացի, թէ գինոյ, թէ ձիթոյ, թէ ձգան*, թէ եիւղոյ, թէ կաթոյ և թէ արջառ և ոչխար մսատու ամենայն ինչ առատութեամբ լի է երկիրս։ Եվ թէ տեղւոյս տաճկաց և խաներաց որպիսութիւնն հարցանես ի լսելն ի ձէնջ

ահ և երկիւղ ձեր պատեալ պաշարեալ է զսոսա, բեկումն ի տեառնէ, սոցա միայն գայս ասէն, թէ ի գալն նոցա մեք ևս ծառայելոց եմք նոցա։ Աստծով ոչ ոք չգայ՝ այս կողմունքս, որ ընդ ձերոյ մեծութեանդ կարիցէ ընդդիմանալ կամ կռուիլ։

Զի խնդիրք և հայցուածք մեր այս են առաջի տէրութեան ձերոյ, զի զոր, ինչ առնելոց էք, շուտ և ոչ այսօր վաղն ձգէք, զի որքան սիրտ չեն առեալ անօրէնքն գայք, որքան լսեն և ոչինչ երևի, սիրտ առնուն և արխային դառնան, զի սորա այնքան արբ չեն, որ կարեն ինքնակալութեան ձերոյ բան մի առնել, աստծով 'ի գալն ձեր ամենեքեանք յոտս ձեր են դառնալոց։

Եվ որ վասն ձմերելոյ՝ զօրացն արքունի հարցանէք, աստծով ունիմք այնպիսի տեղիք, որ ձմերն՝ ամենևին ապահով և ջերմ, որ ոչ ձիւն երևի և ոչ ցուրտ, խոտավէղ՝ և առատ որպէս դաշտն բերրի Մուղան և կամ Այփաւուան կոչեցեալ, Նատր շահն ևս ի տեղերս ձմերէր՝, և որ ամռանն ունիմք ծաղկաւէղ՝ լերինս ապահովս կարկաջահոս՝ անմահական աղբերամբք և ջուրբք լի, որք ՌՔ ՌՏ (հազարք հազարաց) զօրս զէտէղել կարին։ Եւ յերկրիս մերոյ եղեալ ընչիցն հարցանէք, կարօղեմք ասել, թէ ոչ գոյ այսպիսի վայելուչ՝ և երջանիկ բարելի երկիր ի վերայ աշխարհի, զի ունիմք պայծառ և գեղեցիկ ցորեանս անչափս, կարի՝, կորեակ, հաջար, չալթուկս զարմանազանս, բակլայս, ոլոռն, ոսպն, սիսեռն, լոպիայս և այլ ամենայն ընդեղենս առատս և ձիթատու հատս բազումս, աբբրշումէ մետաքս ամբաւս՝ և պատուականագոյնս, բամբակս յոլովս, նաւթս, աղս, ձէթս և ի հանքս և մետաղս՝, ոսկիս, արծաթս, կապարս, պղինձս, երկաթս, շիպս և այլս, և ունիմք անասնոց՝ ձիս տաճիկ և զարմանալիս և օդախաղացս, թէ մատակք և թէ որձք յոլովակիսդ, ուղտս երամակովս, ջորեակս ընտիրս, էշս յառատս, ոչխարս անչափս, սեատաւարս բազումս, գոմէշն յոլովս։ Եվ 'ի մրկաց՝ ունիմք անթիւ այգի, խաղողս զանազանս և տեսակ տեսակս, որ մինչև ի տարին բոլորիլն մնան նոյնով կերպիւ, որպէս ի նոր հատանել ի թփէն, գինիս ազնիւս և զարմանալիս, երազս բարեհամս և այլ օշարակս քաղցրահամս, նուռս կերպիւ կերպիւ պատուականս, խնձորս անթիւս և զարմանալիս, տանձս մնացականս և ամառնային տեսակ տեսակ, թութս, ծիրանս, ալբուխարայս, դեղձս, թուզս ազնիւս, կեռասս բարեհամս, ալուչայս զանազանս, չամչեայս և այլ միրգս յոլովս և անթիւս, ընտանիս և վայրիս։

Եւ ունիմք գմեծ գետ Կուր և այլ յոլով գետս մեծամեծս և մանունս, առոյս լաւագոյն[ս] աղբիւրս անթիւս և բարեհամս, բերելով ինքեանս ձգուն մեծամեծս և մանունս քաղցունս և բարեհամս, զի զայսքան երկարիլիս մեր վասն մեծագունեղ բարձրութեան ձերոյ էր, զի գիտասջիք զինչ և զորպիսութիւն երկրիս մերոյ։